ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/40

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15726-17 գրությամբ «Կոնսէլ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2787 գրության հիման վրա, 29.08.2017թ. թիվ 03/26-3/15726-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Կոնսէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2787 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով «էլեկտրական նյութերի» գնման ընթացակարգի արդյունքում մի շարք կազմակերպությունների կողմից խախտվել է ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ «Կոնսէլ» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ (հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման պայմանագրերին վերաբերող հաշիվ-ապրանքագրերի, ընդունման-հանձնման արձանագրությունները թերի են և պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում, իսկ առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը թերի են): Մասնակցին առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը, սակայն վերջինս սահմանված կարգով շտկում չի իրականացրել: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ մասնակցի հայտը հանձնաժողովի կողմից մերժվել է»:

Ի լրումն 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2787 գրությամբ ներկայացված դիրքորոշման՝ Պատվիրատուն 23.09.2017թ. թիվ ՊՆ035/1447 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի թիվ 58 չափաբաժնով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված «ստարտերը» (22 վտ, 127 Վ) նույնը չէ, ինչ մեկ այլ չափաբաժնով ներկայացված «դրոսել» (250 վտ, 220 Վ) հետևաբար «Կոնսէլ» ԱՊԸ-ի կողմից ներկայացվող պատճառաբանությունը չի ընդունվում նաև այն պատճառով, որ տեխնիկական բնութագրերում հստակ նշվել է ինչպես ստարտերների, այնպես էլ դրոսելների տեխնիկական չափանիշները»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Ռոման Մարդոյանը:

3. «Կոնսել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Կոնսել» ՍՊԸ-ն 31.08.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի թիվ 58 չափաբաժնով պահանջվել է լամպերի ստարտերներ, որի դիմաց մեր կողմից առաջարկվել է «Philips» ապրանքանիշի ստարտեր:

Նշված չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո մեր կողմից 20.05.2017թ. ներկայացվել է որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

30.05.2017թ. armeps համակարգի միջոցով ստացվել է ծանուցում առ այն, որ մեր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես ներկայացված համանման պայմանագրերին վերաբերվող հաշիվ-ապրանքագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունները թերի են և պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում, ինչպես նաև թերի են առաջարկված ապրանքների տեխբնութագրերը: Ծանուցման մեջ նշված էր նաև, որ նշված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու դեպքում մեր հայտը կգնահատվի բավարար, չներկայացնելու դեպքում՝ կգնահատվի անբավարար և կմերժվի:

26.05.2017թ. (հավանաբար սխալ ամսաթիվ) թիվ 4 արձանագրությամբ հանձնաժողովի 08.06.2017թ. որոշմամբ սահմանվել է, որ մեր ընկերության կողմից շտկում չի ներկայացվել:

Ցանկացած մասնակից, հիմք ընդունելով հրավերով սահմանված ապրանքի նկարագիրը, կարող է առաջարկել նույն ապրանքը կամ համանունը, որը կարող է

ընդունվել կամ մերժվել պատվիրատուի կողմից: Նույն տրամաբանությամբ մեր ընկերության կողմից ևս առաջարկվել է համանունը՝ ըստ սահմանված ապրանքի նկարագրի, որը կարող էր ընդունվել կամ մերժվել պատվիրատուի կողմից:

30.05.2017թ. ծանուցմանն ի պատասխան մեր ընկերության կողմից շտկում չի ներկայացվել, քանի որ պարզվել է, որ պատվիրատուի կողմից պահանջվում է ոչ թե ստարտեր, այլ դրոսել (ի դեպ նույն հրավերի շրջանակներում այլ չափաբաժնով եղել է սահմանված ապրանքատեսակ «դրոսել»: Թե ինչ պատճառով է թիվ 58 չափաբաժնում նշվել ստարտեր, այլ ոչ թե դրոսել, պարզ չէ), իսկ նշված բնութագրով ապրանքի այլ առաջարկ մեզ մոտ բացակայում էր:

Առաջարկվող ապրանքի շտկման հնարավորության բացակայության պայմաններում չեն ներկայացվել նաև հաշիվ-ապրանքագրեր և հանձնման-ընդունման ակտեր: Ուստի ՀՀ ՊՆ կողմից արձանագրությունն առ այն, որ մեր կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունները թերի են և պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում, ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը:

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստարկները և այն հանգամանքը, որ ,ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի փաթեթում տեղ են գտել վրիպումներ և թերություններ, իսկ հետագա արձանագրություններում պատվիրատուի կողմից չի պահպանվել պատշաճ ժամանակագրությունը, ավելին՝ պատվիրատուն գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Կոնսէլ» ՍՊԸ-ին ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով դիմել է ՀՀ ՖՆ ժամկետի էական խախտմամբ, ինչը հակասում է հրավերի փաթեթի 8.5 կետի երկրորդ մասով սահմանված պայմանին: Խնդրում ենք Ձեզ կասեցնել ՀՀ Ֆինանսների Նախարարության կողմից 29.08.2017թ. նախաձեռնած բողոքարկման գործընթացն ի օգուտ «Կոնսէլ» ՍՊ Ընկերության:

Ի լրումն 31.08.2017թ. գրության Ընկերությունը Խորհրդին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը՝

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի շրջանակներում Պատվիրատուի կողմից 2017թ. մայիսի 30-ին ներկայացված ծանուցման մեջ նշված է, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից թիվ 58 չափաբաժնի դիմաց առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը թերի են, սակայն չի ներկայացվել հայտնաբերված անհամապատասխանության մանրամասն նկարագիրը, ինչպես նախատեսված է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.7 կետով:

Միևնույն ժամանակ «Կոնսէլ» ԱՊԸ-ի կողմից առաջարկված գնի և տվյալ չափաբաժնի նախահաշվային գումարի միջև առկա զգալի տարբերության փաստը հիմք հանդիսացավ պարզելու, որ Պատվիրատուի կողմից իրականում միգուցե պահանջվում էր այլ ապրանք, քան նկարագրված էր թիվ 58 չափաբաժնի անվանման մեջ: Արդյունքում ընկերությունն ընկել է թյուրիմացության մեջ և որևէ կերպ չի կարողացել արձագանքել սահմանված ժամկետում շտկում ներկայացնելու պահանջին:

Հարկ է նշել նաև, որ վերոնշյալ ծանուցման մեջ նշված է, որ «Կոնսէլ» ԱՊԸ-ի ներկայացրած հաշիվ-ապրանքագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունները թերի են և պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում, և այդ նշումը արված է այն պարագայում, երբ առաջարկվող ապրանքի շտկման պայմանի կատարման անհնարինության պայմաններում ընկերությունը ընդհանրապես չի ներկայացրել հաշիվ-ապրանքագրերը և հանձնման-ընդունման ակտերը: Ուստի, այս նշումը ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության ներկայացուցիչներ Լևոն Բոգդանյանը, Աշոտ Մինասյանը և Նարինե Առաքելյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/40 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15726-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2787 գրությունը և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև հանձնաժողով) 21.03.2017թ. նիստի թիվ 3, 26.05.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, Պատվիրատուի և Ընկերության գրավոր դիրքորոշումները.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Կոնսէլ» ՍՊԸ-ն և ճանաչվել է 1-ին տեղն զբաղեցրած մասնակից՝ ընթացակարգի 58-րդ չափաբաժնի մասով:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3.1 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է Կ-38-2016, Կ-20-2016, ԻՄԹ 27/01/17, Կ-18-2015 գնման պայմանագրերը, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 85.666.400 ՀՀ դրամ, և պարտավորվում է նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

- N 4.1 հավելվածով՝ հրավերով սահմանված առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (58-րդ) չափաբաժնում նշված ապրանքի

տեխնիկական բնութագիրը համարժեք է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրին: Ընդ որում, առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընկերությունը պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Հանձնաժողովը՝

- 21.03.2017թ «Կոնսել» ՍՊԸ-ին ուղարկել է ծանուցում, որով հայտնել է, որ վերջինիս կողմից ներկայացրած որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես, հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման պայմանագրերին վերաբերող հաշիվ-ապրանքագրերի, ընդունման-հանձնման արձանագրությունները թերի են և պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում, իսկ առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը նույնպես թերի են:
- 21.03.2017թ. թիվ 3 արձանագրության 2.4 կետով որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել Ընկերությանն ուղղված ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:
- 08.06.2017թ. կայացած նիստի (26.05.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի շարունակություն) N 4 արձանագրության 1.3 կետով որոշել է Հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատել և մերժել «Կոնսէլ» ՍՊԸ-ի հայտը՝ սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չշտկելու հիմնավորմամբ:

Խորհրդում 07.09.2017թ. կայացած նիստի ժամանակ «Կոնսէլ» ԱՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության կողմից առաջարկված գնի և 58-րդ չափաբաժնի նախահաշվային գումարի միջև առկա զգալի տարբերությունը Ընկերության մոտ կասկած հարուցեց, որ Պատվիրատուի կողմից իրականում պահանջվում էր այլ ապրանք, քան նկարագրված էր թիվ 58 չափաբաժնի անվանման մեջ: Ընկերության ներկայացուցչի հավաստմամբ՝ 58-րդ չափաբաժնով նախատեսված՝ «լամպերի ստարտերներ» ապրանքատեսակի դիմաց նշված տեխնիկական բնութագիրը իրականում համապատասխանում է «դրոսել» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրին, ինչն էլ պատճառ է հանդիսացել վերջինիս կողմից տեխնիկական բնութագրի շտկում

չներկայացնելու համար, քանի որ ստեղծված թյուրիմացության արդյունքում Ընկերությունը չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել անհրաժեշտ շտկումները:

Ընկերությունը ներկայացուցիչը հավելեց նաև, որ առաջարկվող ապրանքի շտկման պայմանի կատարման անհնարինության պայմաններում ընկերությունը ընդհանրապես չի ներկայացրել հաշիվ-ապրանքագրերը և հանձնման-ընդունման ակտերը՝ համարելով այն իմաստազուրկ և Պատվիրատուի այն նշումը, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ի ներկայացրած հաշիվ-ապրանքագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունները թերի են և պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում, ըստ Ընկերության ներկայացուցչի, ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Պատվիրատուի կողմից 2017թ. մայիսի 30-ին ներկայացված ծանուցման մեջ նշված է, որ «Կոնսէլ» ԱՊԸ-ի կողմից թիվ 58 չափաբաժնի դիմաց առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը թերի են, սակայն չի հստակեցվել հայտնաբերված անհամապատասխանության մանրամասն նկարագիրը, ինչը նախատեսված է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.7 կետով:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Հանձնաժողովի համար Ընկերության հայտը մերժելու հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ընկերության որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ համանման պայմանագրերին վերաբերող հաշիվ-ապրանքագրերի, ընդունման-հանձնման արձանագրությունները պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում, իսկ առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը եղել են թերի:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ ինչ վերաբերում է ընթացակարգի հրավերի թիվ 58 չափաբաժնով ներկայացված «ստարտեր» ապրանքատեսակին, ապա գտնում է, որ «ստարտեր 22 վտ, 127 Վ» նույնը չէ, ինչ մեկ այլ չափաբաժնով ներկայացված «դրոսել 250 վտ, 220 Վ», հետևաբար «Կոնսէլ» ԱՊԸ-ի կողմից ներկայացվող պատճառաբանությունն անհիմն է, քանի որ տեխնիկական

բնութագրերում հստակ նշվել է ինչպես «ստարտերների», այնպես էլ «դրոսելների» ապրանքների տեխնիկական պարամետրերը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:
- 49-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:
- 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

• 65-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի՝

• 7.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ g.tovmasyan@mil.am, է ուղարկում սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

- 7.7 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին ենթակետով նախատեսված՝ Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը: Նույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

- 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի II մասով նախատեսված՝ հայտը պատրաստելու Հրահանգի 3.1 կետի համաձայն՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին g.tovmasyan@mil.am է ուղարկում սույն հրավերի Հավելված № 5-ով նախատեսված գրությունը, որին կցվում է նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա

ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, իսկ «բ» ենթակետի համաձայն՝ եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ սահմանված ժամկետում «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստող փաստաթղթերը չեն ներկայացվել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ 21.03.2017թ. Պատվիրատուի կողմից կազմված թիվ 3 արձանագրությունը, ինչպես նաև արձանագրությանը կից՝ Ընկերությանն ուղարկված ծանուցումը չեն պարունակել Ընկերության հայտով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրում հայտնաբերված անհամապատասխանության մանրամասն նկարագրությունը:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ մերժելով Ընկերության հայտը, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 49-րդ և Հրավերի 7.7 կետերով սահմանված պահանջները, քանի որ վերջինիս կողմից չի նշվել Ընկերության հայտով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանության մանրամասն նկարագրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.08.2017թ. «Կոնսէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**